**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/41**

ք. Երևան «30» «06» 2017 թ.

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, /այսուհետ՝ Պատվիրատու/, մի կողմից, քաղաքացի Սուսաննա Թադևոսյանի /անձ. AN0599247/ (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկի տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի և N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի պահանջների:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին N 2 հավելված գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 8400000 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը: Հարկային գործակալ է հանդես գալիս ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի

լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>Ք. Երևան, Կառավարական տուն 2<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի<br>գործառնական վարչություն<br>ՀՎ 900011005890<br>ՀՀՎՀՀ 02512868<br>Աշխատակազմի ղեկավար՝<br>_____ Ն. Հարությունյան<br>(ստորագրություն) Կ.Տ. | Քաղաքացի Սուսաննա Թադևոսյան<br>Կոտայքի մարզ, գ. Առինջ բ թաղ.,<br>2-րդ փող., 35 տուն<br>Անձ. AN0599247,<br>տրվ. 001, 02.08.2013թ<br>HSBC բանկ Հայաստան<br>ՀՎ 217001220318001<br>_____ Ս. Թադևոսյան<br>(ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված 1
«30» «06» 2017թ կնքված
N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/41 գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Գնման առարկա են հանդիսանում Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկի տպագրման ծառայությունները /այսուհետ՝ Ծառայություն/**

| Հ/Հ | Անվանում | Հեղինակներ | Տեխնիկական հատկանիշներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Չափսը | Էջերի քանակը | Թուղթը | Կազմի թուղթը | Կազմարարություն |
| 1 | Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկի տպագրման ծառայություններ | Ս. Թադևոսյան | A 4 | 136 | օֆսեթ, 80 գրամ | գունավոր, ստվարաթուղթ 250 գ | ջերմասոսինձ, լամինացված |

| | |
|---|---|
| Ելքային տեղեկությունները | Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված <<Հրատարակություն, ելքային տեղեկություններ>> ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան: |
| Հատուկ նշագրում | Կազմի վրա, տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝<<Վաճառքի ենթակա չէ>> բառերը: |
| Փոխադրումը և բեռնաթափումը | Կատարողի կողմից, համաձայն կից բաշխման ցուցակի: |

**Պատվիրատու**

Ն. Հարությունյան

**Կատարող**

Ս. Թադևոսյան

Բաշխման ցուցակ /2017թ/
Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկի

| Հ/հ | Մարզի անվանումը | Քանակը |
|---|---|---|
| 1. | Երևան /քաղաքապետարանի կրթության վարչություն/ | 500 |
| 2. | Արագածոտն /մարզպետարանի կրթության վարչություն/ | 250 |
| 3. | Արարատ /մարզպետարանի կրթության վարչություն/ | 250 |
| 4. | Արմավիր /մարզպետարանի կրթության վարչություն/ | 250 |
| 5. | Գեղարքունիք /մարզպետարանի կրթության վարչություն/ | 250 |
| 6. | Լոռի /մարզպետարանի կրթության վարչություն/ | 350 |
| 7. | Կոտայք /մարզպետարանի կրթության վարչություն/ | 230 |
| 8. | Շիրակ /մարզպետարանի կրթության վարչություն/ | 250 |
| 9. | Սյունիք /մարզպետարանի կրթության վարչություն/ | 300 |
| 10. | Վայոց Ձոր /մարզպետարանի կրթության վարչություն/ | 150 |
| 11. | Տավուշ /մարզպետարանի կրթության վարչություն/ | 200 |
| 12. | Երևանի մանկավարժահոգեբանական կենտրոն | 600 |
| 13. | ԵՊՄՀ | 100 |
| 14. | ՀՀԿԳՆ ԿԱԻ | 100 |
| 15. | ՀՀ ԿԳՆ ենթակայության ուսումնական հաստատություններ /համաձայն կից ցուցակի/ | 220 |
| Ընդամենը՝ | | 4000 |

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ս. Թադևոսյան

**Ցուցակ**

**Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկի**

**/ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող Երևանի հանրակրթական դպրոցներ/**

| N | Դպրոցը | Հասցեն | Հեռախոս | Քանակ |
|---|---|---|---|---|
| 1. | թիվ 2 ավագ դպրոց | Կենտրոն, Տիգրան Մեծի 34 | 569105 | 3 |
| 2. | ԵՃՇՊՀ-ի Մ. (թիվ 3 ավագ դպրոց) | Կենտրոն, Խանջյան 9, | 567573 | 3 |
| 3. | թիվ 16 ավագ դպրոց | Էրեբունի, Բուռնազյան 37 | 572680 | 3 |
| 4. | թիվ 29 ավագ դպրոց | Կենտրոն, Սարյան 23, | 58327 | 3 |
| 5. | <<Հերացի ավագ դպրոց>> | Քանաքեռ-Զեյթուն, Հր.Ներսիսյան 3 | 285360 | 3 |
| 6. | թիվ 42 ավագ դպրոց | Կենտրոն, Մաշտոցի 5/2, | 535641 | 3 |
| 7. | թիվ 43 ավագ դպրոց | Էրեբունի, Նոր Արեշ 9/53 | 450730 | 5 |
| 8. | թիվ 46 ավագ դպրոց | Շենգավիթ, Մանանդյան 3, | 445301 | 3 |
| 9. | թիվ 54 ավագ դպրոց | Արաբկիր, Ն.Տիգրանյան 12 | 231891 | 3 |
| 10. | թիվ 62 ավագ դպրոց | Նոր-Նորք 1-ին զանգ., Նանսենի 6, | 634520 | 5 |
| 11. | թիվ N 65 ավագ դպր. | Շենգավիթ,Ֆրունզե 56 | 480922 | 5 |
| 12. | թիվ 83 ավագ դպրոց | Արաբկիր,Օրբելի 63, | 227441 | 5 |
| 13. | թիվ 94 ավագ դպրոց | Աջափնյակ, Բաշինջաղյան 100, | 398920 | 5 |
| 14. | թիվ 97 ավագ դպրոց | Ներքին Շենգավիթ 12փ., | 481091 | 3 |
| 15. | թիվ 103 ավագ դպրոց | Քանաքեռ-Զեյթուն, Սարկավագի 14, | 284685 | 3 |
| 16. | թիվ 105 ավագ դպրոց | Մալաթիա-Սեբաս., Օտյանի 45, | 736391 | 3 |
| 17. | թիվ 109 ավագ դպրոց | Աջափնյակ, Մարգարյան 2-րդ նրբ.,14 | 340944 | 3 |
| 18. | թիվ 112 ավագ դպրոց | Սեբաստիա-84, | 774646 | 3 |
| 19. | թիվ 114 ավագ դպրոց | Կենտրոն, Հանրապետության 73. | 527412 | 3 |
| 20. | թիվ 115 ավագ դպրոց | Շենգավիթ,Շիրակի 72/1 | 423322 | 3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21. | թիվ 118 ավագ դպրոց | Աջափնյակ, Արզումանյան 8 | 391070 | 3 |
| 22. | թիվ 119 ավագ դպրոց | Էրեբունի, Տիգրան Մեծի 64, | 573740, | 3 |
| 23. | թիվ 127 ավագ դպրոց | Քանաքեռ-Զեյթուն, Պ.Սևակի 11, | 281332 | 5 |
| 24. | թիվ 139 ավագ դպրոց | Նոր-Նորքի 2-րդ զանգ. Ն.Ստեփանյան3 | 635570 | 3 |
| 25. | թիվ 142 ավագ դպրոց | Նոր–Նորքի 4-րդ զանգ Գյուլիքեխվյան3 | 635950 | 5 |
| 26. | թիվ 148 ավագ դպրոց | Արաբկիր, Սունդուկյան 78, | 227366 | 3 |
| 27. | թիվ 149 ավագ դպրոց | Արաբկիր, Հովսեփ Էմինի 8, | 237220 | 3 |
| 28. | թիվ 159 ավագ դպրոց | Նոր –Նորք,Նորքի 5-րդ զանգ., | 641133 | 3 |
| 29. | թիվ 170 ավագ դպրոց | Ավան, Թումանյան 3, | 610930 | 5 |
| 30. | թիվ N 182 ավագ դպրոց | Կենտրոն, Կրիվոյի 55, | 540010 | 3 |
| 31. | թիվ 184 ավագ դպրոց | Մալաթիա-Սեբաս., Շերամի 91ա, | | 3 |
| 32. | թիվ 189 ավագ դպրոց | Դավիթաշեն 1-ին թաղ., Տիգրան Մեծի 1 | 369220 | 3 |
| 33. | թիվ 190 ավագ դպրոց | Մալաթիա-Սեբաս., Հ/Ա Բ-2 թաղ , | 722160 | 3 |
| 34. | թիվ 195 ավագ դպրոց | Աջափնյակ, Մ.Մազմանյան 5ա, | 342400 | 3 |
| 35. | թիվ 198 ավագ դպրոց | Նոր Նորքի 9 զ.13/1, | 667250 | 3 |
| 36. | <<Մխիթար Սեբաստացի>> կրթ. | Մալաթիա-Սեբաստ., Հ-Ա Բ-1 թաղամաս | 741112 | 6 |
| 37. | <<Օլիմպոս>> կրթ. | Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 6 | 650702 | 6 |
| 38. | Հայկ. պետ. մանկ. համալ.ավագ դպր. | ք. Երևան, Խանջյան 13 | 522533 | 3 |
| 39. | ՀՊՃՀ ավագ դպրոց | ք.Երևան,Տերյան 105, 5-րդ մասնաշենք | 520630 | 3 |
| 40. | ՀՊԱՀ ավագ դպր. | ք. Երևան, Կորյունի 19 | 524359 | 3 |
| 41. | Վ.Թեքեյանի անվ. թիվ 92 դպրոց | ք.Երևան, Սեբաստիա 84 | 777175 | 6 |
| 42. | Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց | ք.Երևան, Ազատութ. պող., 2-րդ նրբ. 9 | 201310 | 3 |
| 43. | Անանիա Շիրակացի ճեմարան | ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգվ. Միկոյան 35 | 640102 | 3 |
| 44. | Երաժշտական թիվ 13 | ք. Երևան, Ծովակալ Իսակովի 13 | 581894 | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հատուկ դպրոց | | | |
| 45. | Չայկովսկու երաժշ. միջնակարգ դպրոց | ք.Երևան, Կողբացի 36 | 532232 | 3 |
| 46. | Մ.Մելքոնյանի ռազ-մարզակ. վարժարան | pn.monte@mil.am | 353914 | 2 |
| 47. | Վ. Թոթովենցի անվ. N57 հիմնակ. դպրոց | ք.. Երևան, Ագաթանգեղոսի 7ա | 527826 | 4 |
| 48. | Օլիմպ. հերթափոխի պետ. Մարզ. քոլեջ | Արամ Մանուկյան 31 | 773430 | 2 |
| 49. | Պարարվեստի պետական քոլեջ | Երևան, Բայրոնի 5 | 564426 | 3 |
| 50. | Երևանի մտավոր թերզարգ. ունեցող երեխաների N 11 հատուկ դպրոց | ք. Երևան, Նուբարաշեն 6-րդ փող., շենք 11 | 476120 | 6 |
| 51. | Երևանի N 12 հատուկ դպրոց | ք. Երևան, Ս. Վրացյան 75 | 552241 | 6 |
| 52. | Երևանի տես. խանգ. ունեցող երեխաների N 14 հատուկ դպրոց | ք. Երևան, Մամիկոնյանց 31 | 235000 | 6 |
| 53. | Երևանի լսող.խանգ. ունեցող երեխաների հատուկ կրթահամ. | ք. Երևան Նորքի այգիներ - 193 | 651050 | 6 |
| 54. | Երևանի N 16 հատուկ դպրոց | ք. Երևան, Աղի հանք, Աճառյան 40 | 612840 | 6 |
| 55. | Երևանի հենաշարժ. խախտ. ունեցողների N 17 հատուկ դպրոց | ք. Երևան, Մոլդովական 41 | 646601 | 6 |
| 56. | Հանրապետական N 1 հատուկ կրթահամ. | ք. Երևան, Վարդաշեն, 6-րդ փող. 2 | 451421 | 6 |
| 57. | Հանրապետական N 2 հատուկ կրթահամ. | ք. Երևան, Ռաֆֆու 113 | 742206 | 6 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ՝** | | | **220** |

Պատվիրատու

Ն. Հարությունյան

Կատարող

Ս. Թադևոսյան

**Հավելված 2**

30 06
<< >> << >> 2017թ. կնքված
N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/41 գնման պայմանագրի

**Գնման ժամանակացույց**

| Չափաբաժին | Գնման առարկայի անվանումը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Չափման միավորը | Միավորի գինը, հազ.դրամ | Ենթակա է գնման 2017թ 4-րդ եռամսյակ (մինչև դեկտեմբերի 10-ը) | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | քանակը | գումարը, հազ.դրամ | քանակը | գումարը, հազ.դրամ |
| 1 | 2 | | 3 | 4 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկի տպագրման ծառայություններ | 79821200-1 | հատ | 2.100 | 4000 | 8400.0 | 4000 | 8400.0 |
| | **Ընդամենը** | | | | **4000** | **8400.0** | **4000** | **8400.0** |

**Պատվիրատու**

Ն. Հարությունյան

**Կատարող**

Ս. Թադևոսյան

**Հավելված 3**
<< 30 >> << 06 >> 2017թ կնքված
N ՀՀԿԳՆՄԱԾՁԲ-17/41 գնման պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**հազ. դրամ**

| Ծառայության անվանումը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը | Ենթակա է վճարման ՀՀ 2017թվականի պետական բյուջեի՝<<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման, հրատարակում և ձեռքբերում>> ծրագրից, ընդ որում՝ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | | | 1-ին կիսամյակ | | | 9 ամիս | | | տարի | | | Ընդամենը |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր /մինչև դեկտեմբերի 20-ը/ | |
| Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ, այդ թվում՝ Ներառական կրթության կազմակերպման մեթոդական ուղեցույց-ձեռնարկի տպագրման ծառայություններ | 79821200-1 | 4239 | | | | | | | | | | | | 8400.00 | 8400.00 |

**Պատվիրատու**
Ն. Հարությունյան

**Կատարող**
Ս. Թադևոսյան